2924

Ի. ՍՏԱԼԻՆ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

3K33
Q-18

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿՈՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ • 1940

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

08 JUN 2005
3K33 / Ա-18
14 NOV 2009

Ի. ՍՏԱԼԻՆ

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ • 1940

05.08.2013

2924

847
41

И. СТАЛИН

К ВОПРОСУ АГРАРНОЙ ПОЛИТИКИ В СССР

Государственное издательство политической литературы
ЕРЕВАН ● 1940

ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

ՀԱՌ ՄԱՐՔՍԻՍՏ ԱԳՐԱՐԱԳԵՏՆԵՐԻ ԿՈՆՖԵՐԵՆՑԻԱՅՈՒՄ
1929 ԹՎԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ

Ընկերնե՛ր։ Մեր հասարակական-տնտեսական կյանքի հիմնական փաստը ներկա մոմենտում,—մի փաստ, որն իր վրա է դարձնում ընդհանուրի ուշադրությունը,—կոլտնտեսային շարժման վիթխարի աճման փաստն է։

Այժմյան կոլտնտեսային շարժման բնորոշ գիծն այն է, որ կոլտնտեսություններն են մտնում որ՛է միայն չքավորության առանձին խմբերը, ինչպես մինչև այժմ է եղել, այլև միջակն էլ մասսայաբար կոլտնտեսությունները գնաց։ Այս նշանակում է, որ կոլտնտեսային շարժումն աշխատավոր գյուղացիների առանձին խմբերի ու միջնախավերի շարժումից փոխարկվել է գյուղացիության միլիոնավոր ու միլիոնավոր հիմնական մասսաների շարժման։ Սրանով էլ, իմիջի այլոց, հարկավոր է բացատրել վիթխարի կարևորություն ներկայացնող այն փաստը, որ հզոր, հարաճուն՝ հակակուլակային հորդանքի (лавина) բնույթ ընդունած կոլտնտեսային շարժումն իր ճանապարհին սրբում-տանում է կուլակի դիմադրությունը, ջարդում է կուլակությանը և ճանապարհ է բաց անում սոցիալիստական լայն շինարարության համար գյուղում։

Բայց յեթե մենք հիմք ունենք պարծենալու սոցիալիստական շինարարության պրակտիկ *հաջողություններով, ապա նույն այդ բանը չի կարելի ասել մեր* թեորիական *աշխատանքի հաջողությունների մասին եկոնոմիկայի բնագավառում՝ ընդհանրապես, գյուղատնտեսության բնագավառում՝ առանձնապես։ Դեռ ավելին. հարկավոր է ընդունել, որ թեորիական մտքը հետ է մնում մեր պրակտիկ հաջողություններից, որ մեզ մոտ որոշ չափի խզում կա պրակտիկ հաջողությունների ու թեորիական մտքի զարգացման միջև։ Մինչդեռ անհրաժեշտ է, որ թեորիական աշխատանքը որ՛է միայն հասնի պրակտիկ աշխատանքի հետևից, այլև անցնի նրանից՝ զինելով մեր պրակտիկներին սոցիալիզմի հաղթության համար մղած նրանց պայքարում։*

Ցեռ այստեղ չեմ ընդարձակվելու թեորիայի նշանակության մասին։ Ձեզ այդ բավականաչափ լավ հայտնի է։ Հայտնի է, որ թեորիան, եթե նա իսկապես թեորիա է, պրակտիկներին տալիս է կողմնորոշման ուժ, հեռանկարի պարզություն, վստահություն՝ աշխատանքի մեջ, հավատ դեպի մեր գործի հաղթությունը։ Այս ամենը հսկայական նշանակություն ունի—և չի կարող չունենալ—մեր սոցիալիստական շինարարության գործում։ Դժբախտությունն այն է, որ մենք սկսում ենք կաղալ հենց այդ բնագավառում, մեր եկոնոմիկայի հարցերի թեորիական մշակման բնագավառում։ Այլապես ել ինչո՞վ բացատրել այն փաստը, որ մեզանում, մեր հասարակական–քաղաքական կյանքում տակավին դեռ գործածության մեջ են մեր եկոնոմիկայի հարցերի վերաբերյալ զանազան բուրժուական ու մանր–բուրժուական թեորիաներ։ Ինչո՞վ բացատրել, որ այդ թեորիաներն ու թեորիկները մինչև այժմ պատշաճ հակահարվածի չեն հանդիպում։ Ել ինչո՞վ բացատրել, որ մարքս–լենինյան քաղաքատնտեսության մի շարք հիմնական դրույթներ, որոնք ամենավստահելի հակաթույն են բուրժուական ու մանր–բուրժուական թեորիաների դեմ, սկսում են մոռացության տրվել, չեն ժողովրդականացվում մեր մամուլում, չգիտես ինչո՛ւ առաջին պլան չեն քաշվում։ Մի՞թե դժվար է հասկանալ, որ առանց մարքս–լենինյան թեորիայի բազայի վրա այդ բուրժուական թեորիաների դեմ անհաշտ պայքար մղելու՝ դասակարգային թշնամիների նկատմամբ լիակատար հաղթության հասնել անկարելի է։

Նոր պրակտիկան ծնում է նոր մոտեցում դեպի անցման ժամանակաշրջանի եկոնոմիկայի պրոբլեմները։ Այժմ նոր ձևով է դրվում նեպի, դասակարգերի, շինարարության տեմպերի, զոդման, կուսակցության քաղաքականության հարցը։ Պրակտիկայից հետ չմնալու համար հարկավոր է նոր իրադրության տեսակետից այժմ ևեթ զբաղվել բոլոր այդ պրոբլեմների մշակմամբ։ Առանց դրան անկարելի է հաղթահարել մեր պրակտիկների գլուխներն աղրոտող բուրժուական թեորիաները։ Առանց դրան անկարելի է արմատախիլ անել նախապաշարմունքների ամբությունն ստացած այդ թեորիաները։ Վորովհետև թեորիայի բնագավառում բուրժուական նախապաշարմունքների դեմ մղած պայքարով միայն կարելի է հասնել մարքսիզմ–լենինիզմի դիրքերի ամրացմանը։

Թույլ տվեք անցնելու թեորիա կոչվող այդ բուրժուական

նախապաշարմունքներից գոնե մի քանիսի բնութագրմանը և մեր շինարարության մի քանի հանգուցային պրոբլեմները լուսաբանելու կարգով ցուցադրելու նրանց սնանկությունը։

I

«ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌՈՒԹՅԱՆ» ԹԵՈՐԻԱՆ

Դուք, իհարկե, գիտեք, որ կոմունիստների մեջ մինչև այժմ ել տարածված է մեր ժողովրդական տնտեսության սեկտորների այսպես կոչված «հավասարակշռության» թեորիան։ Այդ թեորիան, իհարկե, վոչ մի ընդհանուր բան չունի մարքսիզմի հետ։ Սակայն նա, հենց այդ թեորիան, քարոզվում է աջերի բանակին պատկանող մի շարք անձերի կողմից։ Ըստ այդ թեորիայի յենթադրվում է, թե մենք ամենից առաջ ունենք սոցիալիստական սեկտոր,—սա մի յուրատեսակ արկղ է,—և մենք բացի դրանից ունենք վոչ–սոցիալիստական, յեթե կուզեք՝ կապիտալիստական սեկտոր,—սա ել մյուս արկղն է։ Այս յերկու արկղները գտնվում են տարբեր ռելսերի վրա ու խաղաղորեն առաջ են գլորվում՝ առանց իրար դիպչելու։ Ցերկրաչափությունից հայտնի է, որ զուգահեռ գծերը չեն հանդիպում միմյանց։ Սակայն այդ յերևելի թեորիայի հեղինակները կարծում են, թե այդ զուգահեռները յերբևե միմյանց կհանդիպեն, և, յերբ նրանք հանդիպեն, մեզանում սոցիալիզմ կստացվի։ Ընդամենը այդ թեորիան աչքաթող է անում, որ այսպես կոչված «արկղների» հետևը կանգնած են դասակարգերը, իսկ այդ «արկղների» շարժումը տեղի է ունենում դասակարգային կատաղի պայքարի կարգով, կյանքի ու մահվան պայքարի, «ով ում» սկզբունքով մղվող պայքարի կարգով։

Դժվար չե հասկանալ, որ այդ թեորիան վոչ մի ընդհանուր բան չունի լենինիզմի հետ։ Դժվար չե հասկանալ, որ այդ թեորիան օբյեկտիվորեն նպատակ ունի պաշտպանելու անհատական գյուղացիական տնտեսության դիրքերը, դինելու կուլակային ելեմենտներին «նոր» թեորիական զենքով՝ կոլտնտեսությունների դեմ նրանց մղած պայքարում ու վարկաբեկելու կոլտնտեսությունների դիրքերը։ Սակայն նա, այդ թեորիան, մինչև այժմ ել տարածված է մեր մամուլում։ Ցեվ չի կարելի ասել, թե այդ թեորիան լուրջ հակահարվածի, մանավանդ կործանիչ հակա–

հարված հասցնելիս լինի մեր թեորետիկների կողմից: Այլ կերպ ել ինչո՞վ բացատրել այդ անհեթեթությունը, յեթե վոչ մեր թեորիական մտքի հետամնացությամբ:

Մինչդեռ բավական եր միայն մարքսիզմի գանձարանից հանել վերարտադրության թեորիան ու այն հակադրել սեկտորների հավասարակշռության թեորիային, վորպեսզի այդ վերջին թեորիայից հետք անգամ չմնար: Իրոք, վերարտադրության մարքսիստական թեորիան ուսուցանում է, վոր արդի հասարակությունը չի կարող զարգանալ՝ տարեցտարի կուտակումներ չանելով, իսկ առանց տարեցտարի ընդլայնված վերարտադրություն ունենալու՝ անհնարին է կուտակել: Այս պարզ է ու հասկանալի: Մեր կենտրոնացած սոցիալիստական խոշոր արդյունաբերությունը զարգանում է ընդլայնված վերարտադրության մարքսիստական թեորիայի համաձայն, վորովհետև այն ամեն տարի աճում է իր ծավալով, ունի իր կուտակումները և յոթմղոնանոց քայլերով առաջ է շարժվում: Բայց ժողովրդական տնտեսությունը մեր խոշոր արդյունաբերությամբ չի սպառվում: Ընդհակառակը, մեր ժողովրդական տնտեսության մեջ դեռես գերակշռում է մանր գյուղացիական տնտեսությունը: Կարելի՞ յե արդյոք ասել, թե մեր մանր-գյուղացիական տնտեսությունը զարգանում է ընդլայնված վերարտադրության սկզբունքով: Վո՛չ, այդ չի կարելի ասել: Մեր մանր-գյուղացիական տնտեսությունն իր մասսայական առումով տարեցտարի վո՛չ միայն ընդլայնված վերարտադրություն չի իրականացնում, այլ, ընդհակառակը, նա միշտ չե, վոր հնարավորություն ունի իրականացնելու մինչև իսկ պարզ վերարտադրությունը: Կարելի՞ յե արդյոք արագացրած տեմպով առաջ շարժել մեր սոցիալիստականացրած ինդուստրիան՝ ունենալով այնպիսի գյուղատնտեսական բազա, ինչպես մանր-գյուղացիական տնտեսությունն է, վորն ընդլայնված վերարտադրության ընդունակ չե և բացի այդ գերակշռող ուժ է մեր ժողովրդական տնտեսության մեջ: Վո՛չ, չի կարելի: Կարելի՞ յե արդյոք քիչ թե շատ յերկարատև ժամանակաշրջանի ընթացքում Խորհրդային իշխանությունն ու սոցիալիստական շինարարությունը խարսխել յերկու տարբեր հիմքերի վրա—ամենախոշոր ու միավորված սոցիալիստական արդյունաբերության հիմքի վրա և ամենամասնատված ու հետամնաց մանր-ապրանքային գյուղացիական տնտեսության հիմքի վրա: Վո՛չ, չի կարելի: Այդ յերբևե պետք է վերջանար ամբողջ ժողովրդական տնտեսության լիակատար փլուզումով: Իսկ վո՞րտեղ է յելքը: Յելքն այն է, վոր խոշորացնենք գյուղատնտեսությունը, այն ընդունակ դարձնենք կուտակման, ընդլայնված վերարտադրության և այդպիսով փոխակերպենք ժողովրդական տնտեսության գյուղատնտեսական բազան: Բայց ի՞նչպես խոշորացնել այն: Դրա համար գոյություն ունի յերկու ուղի: Գոյություն ունի կապիտալիստական ուղին, վորի եյությունը գյուղատնտեսության խոշորացումն է՝ նրա մեջ կապիտալիզմն արմատավորելու միջոցով, մի ուղի, վորը տանում է դեպի գյուղացիության աղքատացումը և դեպի կապիտալիստական ձեռնարկությունների զարգացումը գյուղատնտեսության մեջ: Այդ ուղին մենք մերժում ենք, վորպես մի ուղի, վորն անհամատեղելի յե խորհրդային տնտեսության հետ: Գոյություն ունի մի այլ ուղի, սոցիալիստական ուղին, վորի եյությունը կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների արմատավորումն է գյուղատնտեսության մեջ, մի ուղի, վորը տանում է դեպի մանր-գյուղացիական տնտեսությունների միավորումը խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ, վորոնք զինված են տեխնիկայով ու գիտությամբ, ու դեպի կապիտալիստական ելեմենտների արտամղումը հողագործության միջից: Մենք կողմնակից ենք այս յերկրորդ ուղուն:

Հետևապես, հարցն այսպես է դրված. կա՛մ մեկ ուղին, կա՛մ մյուսը, կա՛մ հետ—դեպի կապիտալիզմ, կա՛մ առաջ—դեպի սոցիալիզմ: Վոչ մի յերրորդ ուղի չկա և չի կարող լինել: «Հավասարակշռության» թեորիան յերրորդ ուղի նշելու փորձ է: Յեվ հենց այն պատճառով, վոր նա հաշվի յե առնում յերրորդ (գոյություն չունեցող) ուղին, նա ուտոպիական է, անմարքսիստական:

Այսպես ահա, բավական եր միայն Մարքսի վերարտադրության թեորիան հակադրել սեկտորների «հավասարակշռության» թեորիային, վորպեսզի այս վերջին թեորիայից հետք անգամ չմնար:

Իսկ ինչո՞ւ այդ բանը չի արվում մեր մարքսիստ-ագրարագետների կողմից: Այդ ո՞ւմն է հարկավոր, վոր «հավասարակշռության» ծիծաղաշարժ թեորիան տարածված լինի մեր մամուլում, իսկ վերարտադրության մարքսիստական թեորիան գրվանի տակ մնա:

II

«ԻՆՔՆԱՀՈՍԻ» ԹԵՈՐԻԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Անցնենք քաղաքատնտեսության մեջ յեղած յերկրորդ նախապաշարմունքին, բուրժուական տիպի յերկրորդ թեորիային: Ցես նկատի ունեմ «ինքնահոսի» թեորիան սոցիալիստական շինարարության գործում, մի թեորիա, վորը վոչ մի ընդհանուր բան չունի մարքսիզմի հետ, բայց յեռանդով քարոզվում է աջ բանակին պատկանող մեր ընկերների կողմից: Այդ թեորիայի հեղինակները պնդում են մոտավորապես հետևյալը: Մեզանում կապիտալիզմ կար, զարգանում եր ինդուստրիան կապիտալիստական բազայի վրա, իսկ գյուղը գնում եր կապիտալիստական քաղաքի հետևից տարերայնորեն, ինքնահոսով, փոխակերպվելով ըստ կապիտալիստական քաղաքի պատկերի ու նմանության: Ցեթե բանն այսպես եր կապիտալիզմի որով, ինչո՞ւ չի կարող նույն այդ բանը տեղի ունենալ նաև խորհրդային տնտեսության որով, ինչո՞ւ գյուղը, մանր-գյուղացիական տնտեսությունը չի կարող ինքնահոսի ուղիով գնալ սոցիալիստական քաղաքի հետևից՝ տարերայնորեն փոխակերպվելով ըստ սոցիալիստական քաղաքի պատկերի ու նմանության: Այս թեորիայի հեղինակներն այդ հիման վրա պնդում են, վոր գյուղը կարող է ինքնահոսի կարգով գնալ սոցիալիստական քաղաքի հետևից: Այստեղից մի հարց. արժե՞ արդյոք, վոր մենք տաքանանք խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների կազմակերպման առթիվ, արժե՞ արդյոք, վոր մենք նեղակներ ջարդենք, յեթե գյուղն այնպես էլ կարող է սոցիալիստական քաղաքի հետևից գնալ:

Ահա ձեզ դարձյալ մի թեորիա, վորն որյեկտիվորեն նպատակ ունի նոր զենք տալու գյուղի կապիտալիստական ելեմենտների ձեռքը՝ կոլտնտեսությունների դեմ նրանց մղած պայքարում: Այդ թեորիայի անտիմարքսիստական եությունը վոչ մի կասկածի յենթակա չէ:

Տարորինակ չե՞ արդյոք, վոր մեր թեորետիկները դեռևս ժամանակ չեն գտել փետրահան անելու (расчехвостить) այդ տարորինակ թեորիան, վորն աղբոտում է մեր պրակտիկ-կոլտնտեսականների գլուխները:

Կասկած չկա, վոր սոցիալիստական քաղաքի առաջատար դերը մանր-գյուղացիական գյուղի նկատմամբ մեծ է ու անգնահատելի: Հենց սրա վրա էլ հիմնվում է ինդուստրիայի փոխակերպող դերը գյուղատնտեսության նկատմամբ: Բայց այդ փաստորը բավակա՞ն է արդյոք, վորպեսզի մանր-գյուղացիական գյուղն ինքը գնա քաղաքի հետևից՝ սոցիալիստական շինարարության գործում: Վո՛չ, բավական չե: Կապիտալիզմի որով գյուղը տարերայնորեն գնում եր քաղաքի հետևից, վորովհետև քաղաքի կապիտալիստական տնտեսությունը և գյուղացու մանրապրանքային տնտեսությունն իրենց հիմքում նույնատիպ տնտեսություն են: Իհարկե, մանր-գյուղացիական ապրանքային տնտեսությունը դեռևս կապիտալիստական տնտեսություն չե: Բայց նա իր հիմքում նույնատիպ է կապիտալիստական տնտեսության հետ, վորովհետև հենվում է արտադրության միջոցների մասնավոր սեփականության վրա: Լենինը հազար անգամ իրավացի յե, յերբ նա Բուխարինի «Անցման ժամանակաշրջանի եկոնոմիկային» («Экономика переходного периода») վերաբերող գրքույկին նվիրված իր դիտողություններում խոսում է «գյուղացիության ապրանքային-կապիտալիստական տենդենցի» մասին՝ ի հակադրություն պրոլետարիատի սոցիալիստական տենդենցի[1]: Հենց սրանով էլ բացատրվում է, վոր «մանր արտադրությունը կապիտալիզմ ու բուրժուազիա յե ծնում շարունակ, ամեն որ, ամեն ժամ, տարերայնորեն ու մասսայական մասշտաբով» (Լենին): Հետևաբար, կարելի՞ յե արդյոք ասել, թե մանր-ապրանքային գյուղացիական տնտեսությունն իր հիմքում նույնատիպ է քաղաքի սոցիալիստական արտադրության հետ: Ակներև է, վոր այդ չի կարելի ասել՝ չխղելով կապերը մարքսիզմի հետ: Այլապես Լենինը չեր ասի, թե «քանի դեռ մենք ապրում ենք մանր-գյուղացիական յերկրում, Ռուսաստանում կապիտալիզմի համար տնտեսական ավելի հաստատուն բազա կա, քան կոմունիզմի համար»: Հետևաբար, սոցիալիստական շինարարության գործում ինքնահոսի թեորիան վտած, անտիլենինյան թեորիա յե: Հետևաբար, վորպեսզի մանր-գյուղացիական գյուղը գնա սոցիալիստական քաղաքի հետևից, անհրաժեշտ է, բացի բոլոր մնացած բաներից, արմատավորել գյուղում նաև խոշոր սոցիալիստական տնտեսություններ՝ խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների ձևով, վորպես սոցիալիզմի բազաներ, վորոնք սոցիալիստական քաղաքի գլխավորությամբ կարող են իրենց հետևից տանել գյուղացիության հիմնական մասսաներին:

---

1 Ընդգծումը Լենինինն է: Ի. Ստ.:

Բանը պարզ է։ Սոցիալիստական շինարարության մեջ «ինքնահոսի» թեորիան անտիմարքսիստական թեորիա է։ Սոցիալիստական քաղաքը պետք է իր հետևից տանի մանր-գյուղացիական գյուղը՝ արմատավորելով գյուղում կոլտնտեսություններ ու խորհտնտեսություններ և փոխակերպելով գյուղը նոր, սոցիալիստական յեղանակով։

Տարօրինակ է, որ սոցիալիստական շինարարության մեջ «ինքնահոսի» հակամարքսիստական թեորիան մինչև այժմ մեր թեորետիկ-ագրարագետների պատշաճ հակահարվածին չի հանդիպում։

III

ՄԱՆՐ-ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ «ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ» ԹԵՈՐԻԱՆ

Անցնենք քաղաքատնտեսության մեջ յեղած յերրորդ նախապաշարմունքին, մանր-գյուղացիական տնտեսության «կայունության» թեորիային։ Ամենքին հայտնի յեն բուրժուական քաղաքատնտեսության առարկությունները մանր տնտեսության հանդեպ խոշորի ունեցած առավելության վերաբերյալ մարքսիզմի հայտնի թեզիսի դեմ, որն իբր թե միայն արդյունաբերության մեջ ուժ ունի, բայց կիրառում չունի գյուղատնտեսության մեջ։ Դավիդի ու Հերցի տիպի սոցիալ-դեմոկրատական թեորետիկները, որոնք քարոզում են այդ թեորիան, փորձում էին ընդամին «հենվել» այն փաստի վրա, որ մանր գյուղացին դիմացկուն է, համբերող, պատրաստ է հանձն առնելու ամեն տեսակի զրկանքներ, միայն թե պաշտպանի իր հողի պատառը, որ, դրա շնորհիվ, մանր-գյուղացիական տնտեսությունը կայունություն է հայտաբերում։ Հողագործության մեջ խոշոր տնտեսության դեմ մղած իր պայքարում։ Դժվար չէ հասկանալ, որ այդպիսի «կայունությունն» ամեն մի անկայունությունից վատ է։ Դժվար չէ հասկանալ, որ այդ անտիմարքսիստական թեորիան իրեն նպատակ է դնում միայն մի բան—կապիտալիստական կարգերի գովաբանումն ու ամրացումը։ Ցեվ հենց այն պատճառով, որ նա այդպիսի նպատակ ունի, հենց այդ պատճառով էլ մարքսիստներին հաջողվեց այնպես հեշտ ջախջախել այդ թեորիան։ Բայց բանն այժմ այդ չէ։ Բանն այն է, որ մեր պրակտիկան, մեր իրականությունը նոր արգումենտներ և տալիս այդ թեորիայի դեմ, իսկ մեր թեորետիկները տարօրինակ կերպով չեն ցանկանում կամ չեն կարողանում այդ նոր զենքն ոգտագործել բանվոր դասակարգի թշնամիների դեմ։ Յես նկատի ունեմ հողի մասնավոր սեփականության վոչնչացման պրակտիկան, հողի ազգայնացման պրակտիկան մեզանում, մի պրակտիկա, որը մանր գյուղացուն ազատում է հողի իր պատառին սարկորեն նվիրված լինելուց և դրանով հենց հեշտացնում է անցումը մանր գյուղացիական տնտեսությունից դեպի խոշոր, կոլեկտիվ տնտեսությունը։

Իրոք, Արևմտյան Յեվրոպայում մանր գյուղացուն ի՞նչն էր կապում, կապում է ու դեռ կապելու յե նրա մանր-ապրանքային տնտեսության հետ։ Ամենից առաջ և գլխավորապես իր սեփական հողի պատառի առկայությունը, հողի մասնավոր սեփականության առկայությունը։ Նա տարիներով փող էր կուտակում, վորպեսզի մի պատառ հող գնի, նա այդ պատառը գնել է և, հասկանալի յե, չի ցանկանում նրանից բաժանվել՝ գերադասելով բոլոր ու ամեն տեսակի զրկանքներ կրել, գերադասելով վայրենության մեջ ընկնել, միայն թե պաշտպանի ու իր ձեռքին պահի հողի իր պատառը—իր անհատական տնտեսության հիմքը։ Կարելի՞ յե արդյոք ասել, որ այդ ֆակտորն իր այդ ձևով շարունակում է գործել նաև մեզանում, խորհրդային կարգերի պայմաններում։ Վո՛չ, չի կարելի ասել։ Չի կարելի ասել, որովհետև մեզանում հողի մասնավոր սեփականություն չկա։ Ցեվ հենց այն պատճառով, որ մեզանում հողի մասնավոր սեփականություն չկա, մեզանում չկա նաև գյուղացու այն սարկական նվիրվածությունը հողին, որը կա Արևմուտքում։ Իսկ այդ հանգամանքը չի կարող չհեշտացնել մանր-գյուղացիական տնտեսության անցումը կոլտնտեսությունների ռելսերի վրա։

Ահա թե վորտեղ է այն բանի պատճառներից մեկը, որ խոշոր տնտեսություններին գյուղում, կոլտնտեսություններին գյուղում հաջողվում է այնպես հեշտությամբ ցուցադրել մեզանում, հողի նացիոնալիզացիայի պայմաններում, իրենց գերազանցությունը մանր գյուղացիական տնտեսության հանդեպ։

Ահա թե վորտեղ է խորհրդային ագրարային որենքների հեղափոխական մեծ նշանակությունը, որենքներ, որոնք վոչնչացրին բացարձակ ռենտան, վերացրին հողի մասնավոր սեփականությունը և հողի նացիոնալիզացիա հաստատեցին։

Բայց սրանից հետևում է, որ մենք մեր տրամադրության

տակ ունենք նոր արգումենտ բուրժուական տնտեսագետների դեմ, վորոնք հռչակում են մանր–գյուղացիական տնտեսության կայունությունը խոշոր տնտեսության դեմ մղած նրա պայքարում:

Հապա ինչո՞ւ մեր ագրարագետ–թեորետիկները բավականաչափ չեն ոգտագործում այս նոր արգումենտը՝ բոլոր ու ամեն տեսակի բուրժուական թեորիաների դեմ իրենց մղած պայքարում:

Հողի նացիոնալիզացիան կենսագործելով՝ մենք յելակետ ունենք, իմիջի այլոց, այն թեորիական նախադրյալները, վորոնք տրված են «Կապիտալի» յերրորդ հատորում, Մարքսի «Հավելյալ արժեքի թեորիաները» հայտնի գրքում և Լենինի ագրարային աշխատություններում, վորոնք թեորիական մտքի ամենահարուստ գանձարան են ներկայացնում: Յես նկատի ունեմ հողային ռենտայի թեորիան ընդհանրապես, բացարձակ հողային ռենտայի թեորիան առանձնապես: Այժմ բոլորի համար պարզ է, վոր այդ աշխատությունների թեորիական դրույթները փայլուն կերպով հաստատվեցին քաղաքում ու գյուղում կատարվող մեր սոցիալիստական շինարարության պրակտիկայով:

Անհասկանալի յե միայն, թե ինչո՞ւ Զայանովների տիպի «խորհրդային» տնտեսագետների հակագիտական թեորիաները պետք է ապատ տարածում գտնեն մեր մամուլում, իսկ Մարքսի—Ենգելսի—Լենինի հանճարեղ աշխատությունները հողային ռենտայի ու բացարձակ հողային ռենտայի թեորիայի մասին չպետք է ժողովրդականացվեն ու առաջին պլանը մղվեն, պետք է գրվանի տակ մնան:

Դուք, յերևի, հիշում եք Ենգելսի հայտնի բրոշյուրը «Գյուղացիական հարցի» մասին: Դուք, իհարկե, հիշում եք, թե Ենգելսը վորչափ շրջահայաց կերպով է մոտենում մանր գյուղացիներին ընկերային տնտեսության ուղին, կոլեկտիվ տնտեսության ուղին փոխադրելու հարցին: Թույլ տվեք Ենգելսի բրոշյուրից մեջ բերելու համապատասխան տեղը·

«Մենք վճռականապես կանգնած ենք մանր գյուղացու կողմը· մենք ամեն հնարավոր բան անելու յենք, վորպեսզի նրա համար ավելի տանելի լինի ապրելը, վորպեսզի նրա համար հեշտացնենք անցումը դեպի ընկերայնություն, այն դեպքում, յեթե նա վճռի այդ անել· իսկ այն դեպքում, յեթե նա դեռևս ի վիճակի չի լինի այդ վճիռն ընդունելու, մենք կչանանք նրան հնարավորին չափ ավելի ժամանակ տալ՝ իր հողի պատառի վրա դրա մասին մտածելու համար» 1:

Դուք տեսնում եք, թե Ենգելսը վորչափ շրջահայաց կերպով է մոտենում անհատական գյուղացիական տնտեսությունը կոլեկտիվիզմի ռելսերի վրա փոխադրելու հարցին: Ինչո՞վ բացատրել Ենգելսի այդպիսի՝ առաջին հայացքից չափազանցացրած՝ շրջահայացությունը: Ինչի՞ց եր յելնում նա այդ դեպքում: Ակներև է, վոր նա յելնում եր հողի մասնավոր սեփականության առկայությունից, այն փաստից, վոր գյուղացին ունի հողի «իր պատառը», վորից նրա, գյուղացու համար, դժվար կլինի բաժանվել: Այդպես է գյուղացիությունն Արևմուտքում: Այդպես է գյուղացիությունը կապիտալիստական յերկրներում, վորտեղ գոյություն ունի հողի մասնավոր սեփականություն: Հասկանալի յե, վոր այստեղ հարկավոր է մեծ շրջահայացություն: Կարելի՞ յե արդյոք ասել, վոր մեզանում, ԽՍՀՄ–ում, այդպիսի դրություն կա: Վո՛չ, չի կարելի այդ ասել: Չի կարելի, վորովհետև մեզանում չկա հողի մասնավոր սեփականություն, վորը գյուղացուն բևեռում է իր անհատական տնտեսությանը: Չի կարելի, վորովհետև մեզանում կա հողի նացիոնալիզացիա, վորը հեշտացնում է անհատական գյուղացու անցումը կոլեկտիվիզմի ռելսերի վրա:

Ահա թե վորտեղ է այն համեմատական հեշտության ու արագության պատճառներից մեկը, վորով վերջին ժամանակներս մեզանում զարգանում է կոլտնտեսային շարժումը:

Յավալի յե, վոր մեր թեորետիկ–ագրարագետները դեռևս չեն փորձել պատշաճ պարզությամբ բացահայտելու այդ տարբերությունը գյուղացու դրության մեջ մեզանում և Արևմուտքում: Մինչդեռ այդպիսի աշխատանքը մեծագույն նշանակություն կունենար վո՛չ միայն մեզ, խորհրդային աշխատողներիս համար, այլև բոլոր յերկրների կոմունիստների համար: Վորովհետև կապիտալիստական յերկրների պրոլետարական հեղափոխության համար միևնույնը չե, թե իշխանությունը պրոլետարիատի կողմից վերցվելուց հետո առաջին իսկ որերից հարկ կլինի արդյոք այնտեղ սոցիալիզմ կառուցել հողի նացիոնալիզացիայի բազայի վրա, թե առանց այդպիսի բազայի:

Նորերս ունեցած իմ յելույթում մամուլի մեջ («Մեծ բեկման

1 Ընդգծումն իմն է: Ի· Ստ·:

տարին») ես զարգացրել եմ վորոշ արգումենտներ հոդուտ հողագործության մեջ մանր տնտեսության հանդեպ խոշոր տնտեսության ունեցած գերազանցության, նկատի ունենալով խոշոր խորհտնտեսությունները: Հարկ էլ չկա ապացուցելու, վոր այդ բոլոր արգումենտներն ամբողջապես ու լիովին վերաբերում են նաև կոլտնտեսություններին՝ վորպես խոշոր տնտեսական միավորների: Ցես խոսում եմ վո՛չ միայն զարգացած, մեքենատրակտորային բազա ունեցող, կոլտնտեսությունների մասին, այլև սկզբնական (первичные) կոլտնտեսությունների մասին, վորոնք ներկայացնում են կոլտնտեսային շինարարության, այսպես ասած, մանուֆակտուրային ժամանակաշրջանը և հենվում են գյուղացիական ինվենտարի վրա: Ցես նկատի ունեմ այն սկզբնական կոլտնտեսությունները, վորոնք ներկայումս ստեղծվում են համատարած կոլեկտիվացման շրջաններում և վորոնք հենվում են արտադրության գյուղացիական գործիքների սոսկական գումարման վրա: Վերցնենք, որինակ, Նախկին Դոնի մարզում գտնվող Խոպյորի շրջանի կոլտնտեսությունները: Արտաքուստ այդ կոլտնտեսությունները տեխնիկայի տեսակետից կարծես թե չեն տարբերվում մանր-գյուղացիական տնտեսությունից (քիչ են մեքենաները, քիչ են տրակտորները): Մինչդեռ գյուղացիական գործիքների սոսկական գումարումը կոլտնտեսությունների ներսում՝ տվել է այնպիսի եֆեկտ, վորի մասին մեր պրակտիկները չեյին էլ երազում: Ինչո՞ւմ արտահայտվեց այդ եֆեկտը: Նրանում, վոր կոլտնտեսությունների ռելսերի վրա անցնելը տվեց ցանքի տարածության 30, 40 և 50% ընդարձակում: Ինչո՞վ բացատրել այդ «գլխապտույտային» եֆեկտը: Նրանով, վոր գյուղացիները, վորոնք անզոր եյին անհատական աշխատանքի պայմաններում, մեծագույն ուժի փոխարկվեցին՝ իրենց գործիքները գումարելով ու կոլտնտեսությունների մեջ միավորվելով: Նրանով, վոր գյուղացիները հնարավորություն ստացան մշակելու անհատական աշխատանքի պայմաններում դժվար մշակվող լքած հողերն ու խոպանները: Նրանով, վոր գյուղացիները հնարավորություն ստացան իրենց ձեռքը վերցնելու խոպանները: Նրանով, վոր հնարավորություն ստացվեց գործի դնելու պարապուտները (пустыри), հողի առանձին պատառները, միջնակները և այլն և այլն:

Լքած հողերի ու խոպանների մշակման հարցը հսկայական նշանակություն ունի մեր գյուղատնտեսության համար: Դուք գիտեք, վոր Ռուսաստանում հին ժամանակներում հեղափոխական շարժման առանցք ծառայում եր ագրարային հարցը: Դուք գիտեք, վոր ագրարային շարժման նպատակներից մեկն էլ սակավահողության վոչնչացումն եր: Այն ժամանակ շատերը կարծում եյին, թե այդ սակավահողությունը բացարձակ է, այսինքն՝ վոր ԽՍՀՄ-ում այլևս մշակության համար պիտանի ազատ հողեր չկան: Իսկ ի՞նչ պարզվեց իրականում: Այժմ բոլորի համար պարզ է, վոր ԽՍՀՄ-ում կային ու մնացել են տասնյակ-միլիոնավոր հեկտար ազատ հողեր: Բայց գյուղացին իր խղճուկ գործիքներով դրանք մշակելու վոչ մի հնարավորություն չուներ: Ցեվ հենց այն պատճառով, վոր նա խոպաններն ու լքած հողերը մշակելու հնարավորություն չուներ, հենց այդ պատճառով էլ նա ձգտում եր դեպի «փափուկ հողերը», դեպի կալվածատերերին պատկանող հողերը, դեպի այն հողերը, վորոնք հարմար եյին անհատական աշխատանքի պայմաններում գյուղացիական ինվենտարի ուժերով մշակելու համար: Ահա թե ինչն եր «սակավահողության» հիմքը: Ուստի զարմանալի չէ, վոր մեր Զեռնոտրեստն այժմ հնարավորություն ունի գործի դնելու մոտ քսան միլիոն հեկտար ազատ հողեր, վորոնք գյուղացիները չեն զբաղեցնում, և վորոնք չեն կարող մշակվել անհատական աշխատանքի կարգով մանր-գյուղացիական ինվենտարի ուժերով:

Կոլտնտեսային շարժման նշանակությունը նրա բոլոր ֆազերում,—թե՛ նրա սկզբնական ֆազում, թե՛ ավելի զարգացած ֆազում, յերբ նա զինված է տրակտորներով,—այն է, վոր գյուղացիներն այժմ հնարավորություն են ստանում գործի դնելու լքած հողերն ու խոպանները: Սրա մեջ է գյուղացիների կողմից կոլեկտիվ աշխատանքի անցնելու ժամանակ ցանքի տարածությունները հսկայական չափով ընդարձակելու գաղտնիքը: Սրա մեջ է անհատական գյուղացիական տնտեսության վերաբերմամբ կոլտնտեսությունների ունեցած գերազանցության հիմքերից մեկը:

Ինչ ասել կուզի, վոր կոլտնտեսությունների գերազանցությունն անհատական գյուղացիական տնտեսության հանդեպ է՛լ ավելի անվիճելի կդառնա, յերբ համատարած կոլեկտիվացման շրջաններում սկզբնական կոլտնտեսություններին ոգնության կհասնեն մեր մեքենատրակտորային կայաններն ու շարանները (колонны), յերբ կոլտնտեսություններն իրենք հնարավորություն կստանան իրենց ձեռքում տրակտորներ ու կոմբայններ կենտրոնացնելու:

IV

ՔԱՂԱՔՆ ՈՒ ԳՅՈՒՂԸ

Գոյություն ունի բուրժուական տնտեսագետների կողմից անվող մի նախապաշարմունք այսպես կոչված «մկրատի» մասին, նախապաշարմունք, վորին հարկավոր է անողոք պատերազմ հայտարարել, ինչպես նաև բոլոր մյուս բուրժուական թեորիաներին, վորոնք, դժբախտաբար, տարածված են խորհրդային մամուլում: Ցես նկատի ունեմ այն թեորիան, թե Հոկտեմբերյան հեղափոխությունը գյուղացիությանն իբր թե ավելի քիչ բան է տվել, քան Փետրվարյան հեղափոխությունը, թե Հոկտեմբերյան հեղափոխությունն, խիստ ասած, վոչինչ չի տվել գյուղացիությանը: Այդ նախապաշարմունքը մի ժամանակ մեր մամուլում հրահրում եր «խորհրդային» տնտեսագետներից մեկը: Ճիշտ է, նա, այդ «խորհրդային» տնտեսագետը, հետագայում հրաժարվեց իր թեորիայից: (Մի ձայն. «Իսկ ո՞վ է դա»): Դա — Գրոմանն է: Բայց այդ թեորիան վորդեգրեց տրոցկիստական-զինովյեվյան ոպոզիցիան ու ոգտագործեց կուսակցության դեմ: Ընդվորում վոչ մի հիմք չկա պնդելու, վոր այն ներկայումս ել տարածված չե «խորհրդային» հասարակայնության շրջաններում: Այս շատ կարևոր հարց է, ընկերնե՛ր: Այն շոշափում է քաղաքի ու գյուղի փոխհարաբերությունների պրոբլեմը: Այն շոշափում է քաղաքի ու գյուղի հակադրության վոչնչացման պրոբլեմը: Այն շոշափում է ամենաակտուալ հարցը «մկրատի» վերաբերյալ: Ուստի յես կարծում եմ, վոր արժե այդ տարորինակ թեորիայով զբաղվել:

Ճի՞շտ է արդյոք, վոր գյուղացիները Հոկտեմբերյան հեղափոխությունից վոչինչ չեն ստացել: Դիմենք փաստերին:

Իմ ձեռքին է հայտնի վիճակագիր ընկ. Նեմչինովի հայտնի աղյուսակը, վոր հրապարակված է իմ «Հացի ֆրոնտում» հոդվածում: Այդ աղյուսակից յերևում է, վոր մինչհեղափոխական ժամանակներում կալվածատերերն «արտադրում եյին» վոչ պակաս քան 600 միլիոն փութ հացահատիկ: Հետևաբար, կալվածատերերն այն ժամանակ 600 միլիոն փութ հացի տեր եյին: Կուլակներն այն ժամանակ «արտադրում եյին» 1·900 միլիոն փութ հաց: Այդ շատ մեծ ուժ է, վորի տերն եյին այն ժամանակ կուլակները: Իսկ չքավորությունն ու միջակները արտադրում եյին 2·500 միլիոն փութ հաց: Այսպես է դրության պատկերը

հին գյուղում, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը յեղած գյուղում:

Ի՞նչ փոփոխություններ կատարվեցին գյուղում Հոկտեմբերից հետո: Թվերը վերցնում եմ հենց նույն աղյուսակից: Վերցնենք, որինակ, 1927 թվականը: Իսկ կալվածատերերն այդ տարում վո՞րքան են արտադրել: Պարզ է, վոր նրանք վոչինչ չեն արտադրել և չեյին կարող արտադրել, վորովհետև Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչնչացրել եր կալվածատերերին: Դուք կհասկանաք, վոր այդ պետք է մեծ թեթևացում լիներ գյուղացիության համար, վորովհետև գյուղացիներն ազատվեցին կալվածատիրական լծից: Այդ, իհարկե, մեծ ոգուտ է գյուղացիության համար, վոր նա ստացել է Հոկտեմբերյան հեղափոխության հետևանքով: Վո՞րքան են արտադրել կուլակները 1927 թվականին: 600 միլիոն փութ հաց 1·900 միլիոն փթի փոխարեն: Հետևաբար, Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո յեղած ժամանակաշրջանում կուլակները թուլացել են ավելի քան յերեք անգամ: Դուք կհասկանաք, վոր այս չեր կարող չթեթևացնել չքավորության ու միջակների դրությունը: Իսկ վո՞րքան են արտադրել 1927 թվականին չքավորությունն ու միջակները: 4 միլիարդ փութ՝ 2·500 միլիոն փթի փոխարեն: Հետևաբար, չքավորությունն ու միջակները Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո սկսել են 1,5 միլիարդ փութ հաց ավելի արտադրել, քան մինչհեղափոխական ժամանակ:

Ահա ձեզ փաստեր, վորոնք խոսում են այն մասին, վոր չքավորներն ու միջակները հսկայական ոգուտ են ստացել Հոկտեմբերյան հեղափոխությունից:

Ահա թե ինչ է տվել Հոկտեմբերյան հեղափոխությունը չքավորներին ու միջակներին:

Ի՞նչպես կարելի յե սրանից հետո պնդել, թե Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչինչ չի տվել գյուղացիներին:

Բայց այս ամենը չե, ընկերնե՛ր: Հոկտեմբերյան հեղափոխությունը վոչնչացրեց հողի մասնավոր սեփականությունը, վոչընչացրեց հողի առուծախը, հաստատեց հողի նացիոնալիզացիա: Այս ի՞նչ է նշանակում: Այս նշանակում է, վոր գյուղացին հաց արտադրելու համար բոլորովին կարիք չունի հող գնելու: Առաջներում նա տարիներով միջոցներ եր կուտակում, վորպեսզի հող ձեռք բերի, պարտքերի տակ եր ընկնում, ստրկացման եր գնում, միայն թե հող ձեռք բերի: Հողի գնման ծախ-

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Публ. Библиотека ՀՍՍՌ-ССР им. А. Мясникяна

սերն, իհարկե, բարդվում եյին հացի արտադրության արժեքի վրա: Այժմ գյուղացին դրա կարիքը չունի: Այժմ նա կարող է հաց արտադրել, առանց հող գնելու: Ի՞նչ է՝ սա թեթևացնո՞ւմ է գյուղացիների դրությունը, թե՞ չի թեթևացնում: Պարզ է, վոր թեթևացնում է:

Այնուհետև: Մինչև վերջին ժամանակներս գյուղացին հարկադրված եր հողը քչփորել հին ինվենտարով՝ անհատական աշխատանքի կարգով: Ամեն մեկին հայտնի յե, վոր արտադրության հին, այժմ արդեն անպետք գործիքներով զինված անհատական աշխատանքը չի տալիս այն ոգուտը, վորն անհրաժեշտ է տանելի կերպով ապրելու, իր նյութական դրությունը սիստեմատիկաբար բարձրացնելու, իր կուլտուրան զարգացնելու և սոցիալիստական շինարարության լայն ճանապարհը դուրս գալու համար: Այժմ, կոլտնտեսային շարժման ուժեղացրած զարգացումից հետո, գյուղացիները հնարավորություն ունեն միավորելու իրենց աշխատանքն իրենց հարևանների աշխատանքի հետ, միավորվելու կոլտնտեսության մեջ, հերկելու խոպանը, ոգտագործելու լքած հողը, ստանալու մեքենա ու տրակտոր և այդպիսով բարձրացնելու իրենց աշխատանքի արտադրողականությունը յերկու, յեթե վոչ յերեք անգամ: Իսկ այս ի՞նչ է նշանակում: Այս նշանակում է, վոր կոլտնտեսությունների մեջ միավորվելու շնորհիվ գյուղացին այժմ հնարավորություն ունի առաջվանից շատ ավելի արտադրելու՝ նույն աշխատանքը ծախսելով: Հետևաբար, այս նշանակում է, վոր հացի արտադրությունը շատ ավելի եժանանում է, քան այդ տեղի ուներ մինչև վերջին ժամանակներս: Այս նշանակում է, վերջապես, վոր գների կայունության հետևանքով գյուղացին հացի համար շատ ավելի կարող է ստանալ, քան նա ստանում եր մինչև այժմ:

Ի՞նչպես կարելի յե այս ամենից հետո պնդել, թե Հոկտեմբերյան հեղափոխությունն ոգուտ չի տվել գյուղացիությանը:

Մի՞թե պարզ չէ, վոր այդպիսի չեղած բաներ խոսող մարդիկ ակնհայտ կերպով սուտ են ասում կուսակցության մասին, Խորհրդային իշխանության մասին:

Բայց ի՞նչ է հետևում այս ամենից:

Սրանից հետևում է, վոր «մկրատի» հարցը, «մկրատի» վերացման հարցն այժմ նոր ձևով պետք է դրվի: Սրանից հետևում է, վոր յեթե կոլտնտեսային շարժումն աճի այժմյան տեմպով, «մկրատը» կվոչնչացվի ամենամոտիկ ժամանակներս: Սրանից հետևում է, վոր քաղաքի ու գյուղի փոխհարաբերությունների

հարցը նոր հողի վրա յե դրվում, վոր քաղաքի ու գյուղի միջև յեղած հակադրությունը կվողողվի-կորվի արագացրած տեմպով:

Այս հանգամանքը, ընկերնե՛ր, մեծագույն նշանակություն ունի մեր ամբողջ շինարարության համար: Նա փոխակերպում է գյուղացու հոգեբանությունը և դեպի քաղաք է դարձնում նրա յերեսը: Նա հող է ստեղծում քաղաքի ու գյուղի միջև յեղած հակադրությունը վոչնչացնելու համար: Նա հող է ստեղծում այն բանի համար, վորպեսզի կուսակցության «յերեսներս դեպի գյուղ» լոզունգը լրացվի կոլտնտեսական-գյուղացիների «յերեսներս դեպի քաղաք» լոզունգով: Յեվ սրանում զարմանալու վոչինչ չկա, վորովհետև գյուղացին այժմ քաղաքից ստանում է մեքենա, տրակտոր, ագրոնոմ, կազմակերպիչ, վերջապես ուղղակի ոգնություն՝ պայքարելու և կուլակության հաղթահարելու համար: Հին տիպի գյուղացին՝ իր գազանային անվստահությամբ դեպի քաղաքը, վորպես դեպի մի թալանչի՝ հետին պլանն է անցնում: Նրան փոխարինում է նոր գյուղացին, կոլտնտեսական-գյուղացին, վորը քաղաքի վրա նայում է այնտեղից արտադրական ռեալ ոգնություն ստանալու հույսով: Հին տիպի գյուղացուն, վորը վախենում եր չքավորության մեջ ընկնելուց ու միայն գաղտագողի յեր բարձրանում մինչև կուլակի դրությունը (կարող են ընտրական իրավունքից զրկե՛լ), փոխարինելու յե գալիս նոր գյուղացին, վորը նոր հեռանկար ունի—կոլտնտեսություն մտնել ու թշվառությունից դուրս գալ տնտեսական վերելքի լայն ճանապարհը:

Ահա թե բանն ինչպիսի ընթացք է ստանում, ընկերնե՛ր:

Ավելի ևս ցավալի յե, ընկերնե՛ր, վոր մեր թեորետիկ-ագրարագետները ձեռք չեն առել բոլոր միջոցները, վորպեսզի փետրահան ու արմատախիլ անեն բոլոր ու ամեն տեսակի բուրժուական թեորիաները, վորոնք փորձում են պսակազերծ անել Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումներն ու կոլտնտեսային աճող շարժումը:

V

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Կոլտնտեսությունները վորպես տնտեսության տիպ սոցիալիստական տնտեսության ձևերից մեկն են: Սրա մասին վոչ մի կասկած չի կարող լինել:

Հոետորներից մեկն այստեղ յելույթ ունեցավ և պատկերծ եր անում կոլտնտեսությունների: Նա հավատացնում եր, վոր կոլտնտեսությունները վորպես տնտեսական կազմակերպություններ վոչ մի ընդհանուր բան չունեն տնտեսության սոցիալիստական ձևի հետ: Ցես պետք է հայտարարեմ, ընկերնե՛ր, վոր կոլտնտեսություններն այդպես բնութագրելը միանգամայն սխալ է: Տարակույս չի կարող լինել, վոր դա, այդ բնութագրումը, վոչ մի ընդհանուր բան չունի լենինիզմի հետ:

Ինչո՞վ է վորոշվում տնտեսության տիպը: Ակներև է, վոր արտադրության պրոցեսի մեջ մարդկանց ունեցած հարաբերություններով: Ուրիշ ել ինչո՞վ կարելի յե վորոշել տնտեսության տիպը: Բայց մի՞թե կոլտնտեսության մեջ կա այնպիսի մարդկանց դասակարգ, վորոնք արտադրության միջոցների սեփականատեր են, և այնպիսի մարդկանց դասակարգ, վորոնք զուրկ են արտադրության այդ միջոցներից: Մի՞թե կոլտնտեսության մեջ կա շահագործողների դասակարգ և շահագործվողների դասակարգ: Մի՞թե կոլտնտեսությունն արտադրության հիմնական գործիքների հանրայնացումը չէ այն հողի վրա, վորը, բացի այդ, պետությանն է պատկանում: Ի՞նչ հիմք կա պնդելու, թե կոլտնտեսությունները վորպես տնտեսության տիպ սոցիալիստական տնտեսության ձևերից մեկը չեն:

Իհարկե, կոլտնտեսություններում հակասություններ կան: Իհարկե, կոլտնտեսություններում կան անհատապաշտական և մինչև անգամ կուլակային մնացուկներ, վորոնք դեռևս չեն վերացել, բայց վորոնք ժամանակի ընթացքում անպատճառ պետք է վերանան, ինչ չափով վոր կամրապնդվեն կոլտնտեսությունները, ինչ չափով վոր կմեքենացվեն նրանք: Բայց մի՞թե կարելի յե ժխտել, վոր կոլտնտեսություններն ամբողջությամբ առած, իրենց հակասություններով ու թերություններով հանդերձ, կոլտնտեսությունները վորպես տնտեսական փաստ հիմնականում գյուղի զարգացման նոր ուղին են, գյուղի սոցիալիստական զարգացման ուղին, ի հակադրություն զարգացման կուլակային, կապիտալիստական ուղու: Մի՞թե կարելի յե ժխտել, վոր մեր պայմաններում կոլտնտեսությունները (յես խոսում եմ կոլտնտեսությունների, և վոչ թե կեղծ կոլտնտեսությունների մասին) գյուղում կատարվող սոցիալիստական շինարարության բազան ու ոջախն են, վորոնք աճել են կապիտալիստական էլեմենտների դեմ մղած կատաղի գոտեմարտերում:

Պարզ չե՞ մի թե, վոր ընկերներից վոմանց փորձերը՝ պատկերծ անելու կոլտնտեսությունները և նրանց հայտարարելու տնտեսության բուրժուական ձև—զուրկ են ամեն մի հիմքից:

1923 թվին մեզանում դեռևս մասսայական կոլտնտեսային շարժում չկար: Լենինն իր «Կոոպերացիայի մասին» բրոշյուրում նկատի ուներ կոոպերացիայի բոլոր տեսակները, նրա թե՛ սովորական ձևերը (մատակարարող–վաճառահանող), թե՛ բարձր ձևերը (կոլտնտեսային ձևը): Իսկ այն ժամանակ ի՞նչ եր ասում նա կոոպերացիայի մասին, կոոպերատիվ ձեռնարկությունների մասին: Ահա Լենինի «Կոոպերացիայի մասին» բրոշյուրից մի ցիտատ.

«Գոյություն ունեցող մեր կարգերում կոոպերատիվ ձեռնարկությունները տարբերվում են մասնավոր–կապիտալիստական ձեռնարկություններից վորպես կոլեկտիվ ձեռնարկություններ, բայց չեն տարբերվում 1 սոցիալիստական ձեռնարկություններից, յեթե նրանք հիմնված են այն հողի վրա, այնպիսի արտադրամիջոցների առկայությամբ, վորոնք պատկանում են պետությանը, այսինքն՝ բանվոր դասակարգին» (հ. XXVII, էջ 396):

Հետևապես, Լենինը վերցնում է կոոպերատիվ ձեռնարկությունները վո՛չ թե ինքնին, այլ գոյություն ունեցող մեր կարգերի կապակցությամբ, այն կապակցությամբ, վոր նրանք գործում են պետությանը պատկանող հողի վրա, մի յերկրում, վորտեղ արտադրության միջոցները պատկանում են պետությանը,— և այդ կարգով քննելով նրանք՝ Լենինը պնդում է, վոր կոոպերատիվ ձեռնարկությունները չեն տարբերվում սոցիալիստական ձեռնարկություններից:

Այսպես է խոսում Լենինն առհասարակ կոոպերատիվ ձեռնարկությունների մասին:

Պարզ չե՞ արդյոք, վոր ավելի ևս հիմք կա նույն այդ բանն ասելու մեր ժամանակաշրջանի կոլտնտեսությունների մասին:

Դրանով ել, իմիջի այլոց, բացատրվում է այն, վոր Լենինը մեր պայմաններում տեղի ունեցող՝ «կոոպերացիայի սոսկական աճումը» «սոցիալիզմի աճման հետ նույնական» է համարում:

Դուք տեսնում եք, վոր կոլտնտեսությունները պատկերծ անելով՝ վերոհիշյալ հռետորն ամենակոպիտ սխալը թույլ տվեց լենինիզմի հանդեպ:

Այդ սխալից բղխում է նրա մի ուրիշ սխալը—դասակարգա-

1 Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

յին պայքարի մասին կոլտնտեսություններում: Հեղինակն այնպես գունեղ նկարագրեց դասակարգային պայքարը կոլտնտեսություններում, վոր կարելի յե կարծել, թե դասակարգային պայքարը կոլտնտեսություններում չի տարբերվում կոլտնտեսություններից դուրս յեղած դասակարգային պայքարից: Դեռ ավելին. կարելի յե կարծել, թե նա ե՛լ ավելի կատաղի յե դառնում այնտեղ: Սակայն միայն հիշատակված հեղինակը չե, վոր մեղավոր ե այս բանում: Դասակարգային պայքարի վերաբերյալ շաղակրատանքը, կոլտնտեսություններում յեղած դասակարգային պայքարի վերաբերյալ ճիչերն ու ճղճղոցն այժմ մեր բոլոր «ձախ» աղմկարարների բնորոշ գիծն են կազմում: Ըստվորում այդ ճղճղոցի մեջ ամենակոմիկականն այն ե, վոր այդ «ճղճղացողները» դասակարգային պայքարը «տեսնում են» այնտեղ, վորտեղ այն չկա կամ համարյա չկա, բայց այն չեն տեսնում այնտեղ, վորտեղ գոյություն ունի այն և աչքերից դուրս ե թափվում:

Դասակարգային պայքարի ելեմենտներ կա՞ն արդյոք կոլտնտեսություններում: Այո՛, կան: Կոլտնտեսություններում դասակարգային պայքարի ելեմենտներ չեն կարող չլինել, յեթե այնտեղ պահպանվում են դեռևս անհատապաշտական կամ նույնիսկ կուլակային հոգեբանության մնացուկները, յեթե այնտեղ դեռևս վորոշ անհավասարություն կա: Կարելի՞ յե արդյոք ասել, վոր դասակարգային պայքարը կոլտնտեսություններում հավասարանշանակ ե կոլտնտեսություններից դուրս տեղի ունեցող դասակարգային պայքարին: Վո՛չ, չի կարելի: Մեր «ձախ» ֆրազյորների սխալն ել հենց այն ե, վոր նրանք այդ տարբերությունը չեն տեսնում: Ի՞նչ ե նշանակում դասակարգային պայքար կոլտնտեսություններից դուրս, մինչև կոլտնտեսությունների գոյանալը: Այդ նշանակում ե—պայքար կուլակի դեմ, վորն արտադրության գործիքների ու միջոցների տեր ե և արտադրության այդ գործիքների ու միջոցների ոգնությամբ ստրկացնում ե չքավորությանը: Այդ պայքարը վո՛չ թե կյանքի, այլ մահու պայքար ե: Իսկ ի՞նչ ե նշանակում դասակարգային պայքար կոլտնտեսությունների բազայի վրա: Ամենից առաջ, այդ նշանակում ե, վոր կուլակը ջախջախված ե և զրկված արտադրության գործիքներից ու միջոցներից: Յերկրորդ, այդ նշանակում ե, վոր չքավորներն ու միջակները միավորված են կոլտնտեսություններում՝ արտադրության հիմնական գործիքների ու միջոցների հանրայնացման բազայի վրա: Վերջապես, այդ նշանակում

ե, վոր բանը վերաբերում ե այն պայքարին, վորը տեղի յե ունենում կոլտնտեսությունների անդամների միջև, վորոնցից վոմանք դեռևս չեն ազատագրվել անհատապաշտական ու կուլակային մնացուկներից և փորձում են հոգուտ իրենց ոգտագործել կոլտնտեսություններում յեղած վորոշ անհավասարությունը, իսկ մյուսները ցանկանում են կոլտնտեսություններից վտարել այդ մնացուկներն ու այդ անհավասարությունը: Պարզ չե՞ միթե, վոր միայն կույրերը չեն կարող տեսնել կոլտնտեսությունների բազայի վրա տեղի ունեցող դասակարգային պայքարի և կոլտնտեսություններից դուրս տեղի ունեցող դասակարգային պայքարի միջև յեղած տարբերությունը:

Սխալ կլիներ կարծել, վոր յեթե տրված են կոլտնտեսությունները, ապա տրված ե ամեն անհրաժեշտը սոցիալիզմի կառուցման համար: Ավելի ևս սխալ կլիներ կարծել, թե կոլտնտեսությունների անդամներն արդեն սոցիալիստներ են դարձել: Վո՛չ, հարկ կլինի դեռևս շատ աշխատելու այն բանի վրա, վորպեսզի վերակերտենք կոլտնտեսական-գյուղացուն, շտկենք նրա անհատապաշտական հոգեբանությունը և նրանից սոցիալիստական հասարակության իսկական աշխատավոր պատրաստենք: Յեվ այդ կկատարվի այնքան ավելի շուտ, վորքան ավելի շուտ կմեքենայացվեն կոլտնտեսությունները, վորքան ավելի շուտ նրանք տրակտորիզացիայի կենթարկվեն: Բայց այս բնավ չի նսեմացնում կոլտնտեսությունների մեծագույն նշանակությունը, վորպես գյուղի սոցիալիստական փոխակերպման լծակի: Կոլտնտեսությունների մեծ նշանակությունն ել հենց այն ե, վոր նրանք հիմնական բազան են հողագործության մեջ մեքենաներ ու տրակտորներ գործադրելու համար, վոր նրանք հիմնական բազան են գյուղացու վերակերտման համար, նրա հոգեբանությունը պրոլետարական սոցիալիզմի վոգով վերամշակելու համար: Լենինն իրավացի յեր, յերբ ասում եր.

> «Մանր հողագործի վերամշակման, նրա ամբողջ հոգեբանության ու ընտելությունների վերամշակման գործը մի գործ ե, վորը սերունդներ ե պահանջում: Վճռել այս հարցը մանր հողագործի նկատմամբ, առողջացնել, այսպես ասած, նրա ամբողջ հոգեբանությունը, կարող ե միայն նյութական բազան, տեխնիկան, տրակտորների ու մեքենաների՝ մասսայական մասշտաբով կիրառումը հողագործության մեջ, մասսայական մասշտաբով ելեկտրիֆիկացիան» (հ. XXVI, եջ 239):

Ո՞վ կարող ե ժխտել, վոր կոլտնտեսությունները սոցիալիստական տնտեսության հենց այն ձևն են, վորի միջոցով ե մի-

այն, վոր բաղմամիլիոն մանր գյուղացիությունը կարող է հաղորդակից լինել մեքենաներին ու տրակտորներին, վորպես տընտեսական վերելքի լծակների, վորպես գյուղատնտեսության սոցիալիստական զարգացման լծակների:

Այս ամենի մասին մոռացել են մեր «ձախ» ֆրազյորները:

Այս մասին մոռացել է նաև մեր հռետորը:

VI

ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՅԵՎ ՇՐՋԱԴԱՐՁԸ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վերջապես, դասակարգային տեղաշարժերին ու գյուղի կապիտալիստական էլեմենտների վրա սոցիալիզմի կառարած հարձակմանը վերաբերող հարցը:

Վերջին տարվա ընթացքում մեր կառարած աշխատանքի ընորոշ գիծն այն է, վոր մենք, վորպես կուսակցություն, վորպես Խորհրդային իշխանություն, ա) ամբողջ ֆրոնտով հարձակում ծավալեցինք գյուղի կապիտալիստական էլեմենտների դեմ, բ) այդ հարձակումը տվեց և շարունակում է տալ, ինչպես հայտնի է, խիստ շոշափելի դրական արդյունքներ:

Այս ի՞նչ է նշանակում: Այս նշանակում է, վոր կուլակության շահագործողական տենդենցների սահմանափակման քաղաքականությունից մենք անցել ենք կուլակությունը վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու քաղաքականությանը: Այս նշանակում է, վոր մենք կառարել ենք ու շարունակում ենք կառարել մեր ամբողջ քաղաքականության վճռողական շրջադարձերից մեկը:

Մինչև վերջին ժամանակները կուսակցությունը կանգնած եր կուլակության շահագործողական տենդենցների սահմանափակման դիրքում: Հայտնի է, վոր այդ քաղաքականությունը հրաչակվել եր դեռևս VIII համագումարում: Նա, հենց այդ քաղաքականությունը, նորից ազդարարվեց նեպը մացնելիս և մեր կուսակցության XI համագումարում: Բոլորն էլ հիշում են Լենինի հայտնի նամակը՝ ուղղված Պրեոբրաժենսկուն (1922 թ.), վորտեղ նա նորից է վերադառնում հենց այդպիսի քաղաքականություն կիրառելու անհրաժեշտության հարցին: Այդ քաղաքականությունը, վերջապես, հաստատվեց մեր կուսակցության XV

համագումարի կողմից: Այդ քաղաքականությունն էլ մենք կիրառում էինք մինչև վերջին ժամանակները:

Ճի՞շտ եր արդյոք այդ քաղաքականությունը: Այո՛, անպայման ճիշտ եր այն: Արդյոք մենք մի հինգ կամ մի յերեք տարի առաջ կարո՞ղ էինք կուլակության վրա այդպիսի հարձակման ձեռնարկել: Մենք այն ժամանակ կարո՞ղ էինք արդյոք հույս ունենալ այդպիսի հարձակման հաջողության վրա: Վո՛չ, չէինք կարող: Այդ ամենավտանգավոր ավանտյուրիզմը կլիներ: Հարձակում կառարելու ամենավտանգավոր մի խաղ կլիներ այդ: Վորովհետև մենք հաստատապես կձախողվեցինք այդ գործում և, ձախողվելով, կամրացնեցինք կուլակության դիրքերը: Ինչո՞ւ: Վորովհետև մենք դեռևս չունեցինք այն հենակետերը գյուղում՝ հանձին խորհտնտեսությունների ու կոլտնտեսությունների լայն ցանցի, վորոնց վրա կարելի կլիներ հենվել կուլակության դեմ վճռական հարձակում գործելիս: Վորովհետև մենք այն ժամանակ հնարավորություն չունեցինք կուլակի կապիտալիստական արտադրությունը փոխարինելու սոցիալիստական արտադրությամբ՝ կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների ձեվով:

1926—1927 թ. թ. զինովյեվյան-տրոցկիստական ոպոզիցիան ուժգնագույն կուսակցության վզին եր փաթաթում կուլակության դեմ անհապաղ հարձակում գործելու քաղաքականությունը: Կուսակցությունը չդիմեց այդ վտանգավոր ավանտյուրային, վորովհետև նա գիտեր, վոր լուրջ մարդիկ չեն կարող հարձակում կառարելու խաղ թույլ տալ իրենց: Կուլակության դեմ հարձակվելը լուրջ գործ է: Այն չի կարելի չփոթել կուլակության դեմ դեկլամացիա անելու հետ: Այն նույնպես չի կարելի չփոթել Կուլակության հետ ճանկռտվելու քաղաքականության հետ, վոր կուսակցության վզին ուժգնորեն փաթաթում եր զինովյեվյան-տրոցկիստական ոպոզիցիան: Հարձակվել կուլակության վրա—այդ նշանակում է ջարդել կուլակությանը և նրան վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկել: Այս նպատակներից դուրս՝ հարձակումը դեկլամացիա է, ճանկռտում, դատարկախոսություն, ամեն բան, ինչ կուզեք, միայն թե վոչ իսկական բոլշևիկյան հարձակում: Հարձակվել կուլակության վրա—այդ նշանակում է գործի պատրաստվել ու հարվածել կուլակությանը, բայց հարվածել նրան այնպես, վորպեսզի նա այլևս չկարողանա վոտքի կանգնել: Հենց այս է, վոր մեզանում, բոլշևիկներիս

մոտ, իսկական հարձակում է կոչվում։ Արդյոք մի հինգ տարի կամ մի յերեք տարի սրանից առաջ մենք կարո՞ղ եյինք այդպիսի հարձակման ձեռնարկել՝ հաջողություն ունենալու հուսով։ Վո՛չ, չեյինք կարող։

Իրոք, կուլակը 1927 թվին 600 միլիոն փթից ավելի հաց եր արտադրում, իսկ այդ գումարից արտադյուղական փոխանակության կարգով արտահանում եր մոտ 130 միլիոն փութ։ Այս բավական լուրջ ուժ է, վորի հետ չի կարելի հաշվի չնստել։ Իսկ ինչքա՞ն եյին արտադրում այն ժամանակ մեր կոլտնտեսությունները և խորհտնտեսությունները։ Մոտ 80 միլիոն փութ, վորից չուկա արտահանեցին (ապրանքային հաց) մոտ 35 միլիոն փութ։ Ինքներդ դատեցեք, արդյոք այն ժամանակ մենք կարո՞ղ եյինք կուլակային արտադրությունը և կուլակային ապրանքային հացը փոխարինել մեր կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների արտադրությամբ ու ապրանքային հացով։ Պարզ է, վոր չեյինք կարող։ Ի՞նչ է նշանակում այդպիսի պայմաններում վճռական հարձակման ձեռնարկել կուլակության դեմ։ Այդ նշանակում է հատատապես ձախողվել, ուժեղացնել կուլակության դիրքերը և առանց հացի մնալ։ Ահա թե ինչու այն ժամանակ մենք չեյինք կարող ձեռնարկել ու չպիտի ձեռնարկեյինք հարձակման՝ կուլակության դեմ, հակառակ զինովյեվյան–տրոցկիստական ոպոզիցիայի արկածախնդրական դեկլամացիաների։

Ե՛, իսկ ա՞յժմ։ Այժմ գործն ի՞նչ դրության մեջ է։ Այժմ մենք բավարար նյութական բազա ունենք այն բանի համար, վորպեսզի հարվածենք կուլակությանը, կոտրենք նրա դիմադրությունը, լիկվիդացիայի յենթարկենք նրան իբրև դասակարգ և նրա արտադրությունը փոխարինենք կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների արտադրությամբ։ Հայտնի յե, վոր 1929 թվին հացի արտադրությունը կոլտնտեսություններում ու խորհտնտեսություններում կազմում եր 400 միլիոն փթից վոչ պակաս (200 միլիոն փթով պակաս կուլակային տնտեսության 1927 թվի համախառն արտադրանքից)։ Այնուհետև հայտնի յե, վոր 1929 թվին կոլտնտեսություններն ու խորհտնտեսությունները 130 միլիոն փթից ավելի ապրանքային հաց տվին (այսինքն՝ ավելի, քան կուլակը 1927 թվին)։ Վերջապես հայտնի յե, վոր 1930 թվին կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների հացի համախառն արտադրանքը կազմելու յե 900 միլիոն փթից վոչ պակաս (այսինքն՝ ավելի, քան կուլակի համախառն արտադրանքը 1927 թվին), իսկ ապրանքային հաց նրանք կտան 400 միլիոն փթից վոչ պակաս (այսինքն՝ անհամեմատ ավելի, քան կուլակը 1927 թվին)։

Ահա թե այժմ գործն ինչ դրության մեջ է մեզանում, ընկերնե՛ր։

Ահա թե ինչպիսի տեղաշարժում է կատարվել մեզանում յերկրի եկոնոմիկայի մեջ։

Ահա թե դասակարգային ուժերի ինչպիսի տեղաշարժում է կատարվել մեզանում վերջին ժամանակներս։

Այժմ մեզանում, ինչպես տեսնում եք, նյութական բազա կա այն բանի համար, վորպեսզի կուլակային արտադրությունը փոխարինենք կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների արտադրությամբ։ Ահա թե ինչու մեր հարձակումը կուլակության դեմ այժմ անկասկածելի հաջողություն ունի։ Ահա թե ինչպես պետք է հարձակվել կուլակության վրա, յեթե խոսենք իսկական հարձակման մասին, և վոչ թե սահմանափակվենք կուլակության դեմ ուղղված սնամեջ դեկլամացիայով։

Ահա թե ինչու վերջին ժամանակներս կուլակության շահագործողական տենդենցները սահմանափակելու քաղաքականությունից մենք անցանք կուլակությունը վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկելու քաղաքականությանը։

Լավ, բայց ի՞նչպես վարվել կուլակաթափության քաղաքականության հետ, կարելի՞ յե արդյոք կուլակաթափություն թույլատրել համատարած կոլեկտիվացման շրջաններում,—հարցնում են զանազան կողմերից։ Ծիծաղելի՞ հարց։ Կուլակաթափություն չեր կարելի թույլատրել, քանի դեռ մենք կանգնած եյինք կուլակության շահագործողական տենդենցների սահմանափակման տեսակետի վրա, քանի դեռ մենք հնարավորություն չունեյինք վճռական հարձակման անցնելու կուլակության դեմ, քանի դեռ մենք հնարավորություն չունեյինք կուլակային արտադրությունը փոխարինելու կոլտնտեսությունների ու խորհտնտեսությունների արտադրությամբ։ Այն ժամանակ կուլակաթափության անթույլատրելիության քաղաքականությունն անհրաժեշտ եր ու ճիշտ։ Իսկ ա՞յժմ։ Այժմ բանն ուրիշ է։ Այժմ մենք հնարավորություն ունենք վճռական հարձակում գործելու կուլակության վրա, կոտրելու նրա դիմադրությունը, լիկվիդացիայի յենթարկելու նրան վորպես դասակարգ և նրա արտադրությունը փոխարինելու կոլտնտեսությունների ու խորհտնտեսու-

թյունների արտադրությամբ: Այժմ կուլակաթափությունը կատարում են իրենք չքավոր-միջակային մասսաները, վորոնք համատարած կոլեկտիվացում են իրականացնում: Այժմ կուլակաթափությունը համատարած կոլեկտիվացման շրջաններում արդեն հասարակ վարչական միջոցառում չէ: Այժմ կուլակաթափությունն այնտեղ կոլտնտեսությունների կազմավորման ու զարգացման բաղկացուցիչ մասն է: Ահա թե ինչու այժմ կուլակաթափության մասին ընդարձակաբանելը ծիծաղելի ու անլուրջ բան է: Գլուխը կտրելուց հետո՝ մազերի համար լաց չեն լինում:

Պակաս ծիծաղելի չի թվում մյուս հարցը. կարելի՞ յե արդյոք կուլակին կոլտնտեսություն թողնել: Իհարկե, չի կարելի նրան կոլտնտեսություն թողնել: Չի կարելի, վորովհետև նա կոլտնտեսային շարժման յերդվյալ թշնամին է: Թվում է, թե պարզ է:

VII

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ահա, ընկերնե՛ր, վեց հանգուցային հարցեր, վորոնց կողքով չի կարող անցնել մեր մարքսիստ-ագրարագետների թեորիական աշխատանքը:

Այս հարցերի նշանակությունն ամենից առաջ այն է, վոր նրանց մարքսիստական մշակումը հնարավորություն է տալիս արմատահան անելու բոլոր ու ամեն տեսակի բուրժուական թեորիաները, վորոնք յերբեմն—համոթ մեզ—տարածում են մեր ընկեր-կոմունիստները և վորոնք աղբոտում են մեր պրակտիկների գլուխները: Իսկ արմատահան անել այդ թեորիաները և նրանց դեն շպրտել վաղուց եր հարկավոր: Վորովհետև այդ թեորիաների դեմ անողոք պայքար մղելով է միայն, վոր կարող է աճել ու ամրանալ մարքսիստ-ագրարագետների թեորիական միտքը:

Վերջապես, այս հարցերի նշանակությունն այն է, վոր նրանք նոր կերպարանք են տալիս անցման ժամանակաշրջանի եկոնոմիկայի հին պրոբլեմներին:

Այժմ նոր ձևով է դրվում նեպի, դասակարգերի, կոլտնտեսությունների, անցման ժամանակաշրջանի եկոնոմիկայի հարցը:

Հարկավոր է բացահայտել այն մարդկանց սխալը, վորոնք նեպն ըմբռնում են վորպես նահանջ, և միմիայն վորպես նահանջ: Իրականում Լենինը դեռևս նեպը մտցնելիս ասում եր, վոր նեպը նահանջով չի սպառվում, վոր նա դրա հետ մեկտեղ նշանակում է նախապատրաստություն՝ քաղաքի ու գյուղի կապիտալիստական ելեմենտների վրա նոր վճռական հարձակում գործելու համար: Հարկավոր է բացահայտել այն մարդկանց սխալը, վորոնք կարծում են, թե նեպը հարկավոր է միայն կապի համար քաղաքի ու գյուղի միջև: Մեզ հարկավոր է վոչ ամեն տեսակի կապ քաղաքի ու գյուղի միջև: Մեզ հարկավոր է այնպիսի մի կապ, վորն ապահովում է սոցիալիզմի հաղթությունը: Յեվ յեթե մենք նեպի կողմնակից ենք, ապա այն պատճառով, վոր այն ծառայում է սոցիալիզմի գործին: Իսկ յերբ այն դադարի սոցիալիզմի գործին ծառայելուց, մենք այն գրողի ծոցը կնետենք: Լենինն ասում եր, վոր նեպը մտցված է լրջորեն ու յերկար ժամանակով: Բայց նա յերբեք չի ասել, թե նեպը մտցված է ընդմիշտ:

Հարկավոր է նույնպես դնել վերարտադրության մարքսիստական թեորիան մասսայականացնելու հարցը: Հարկավոր է մշակել մեր ժողովրդական տնտեսության հաշվեկշռի կառուցման սխեմայի հարցը: Այն, ինչ հրապարակված է Կենտվիճվարչի կողմից 1926 թվին ժողովրդական տնտեսության հաշվեկշռի ձևով, վո՛չ թե հաշվեկշիռ է, այլ թվախաղ: Գործին չի համապատասխանում նաև ժողովրդական տնտեսության հաշվեկշռի պրոբլեմի վերաբերյալ Բազարովի ու Գրոմանի տված մեկնաբանությունը: ԽՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության հաշվեկշռի սխեման պետք է մշակեն հեղափոխական մարքսիստները, յեթե նրանք ընդհանրապես ցանկանում են զբաղվել անցման ժամանակաշրջանի եկոնոմիկայի հարցերի մշակմամբ:

Լավ կլիներ, յեթե մեր մարքսիստ-տնտեսագետները զատեին աշխատողների մի հատուկ խումբ՝ անցման ժամանակաշրջանի եկոնոմիկայի պրոբլեմները նրանց նոր դրվածքով մշակելու համար:

Публ. Библиотека
ՀՍՍՀ-CCP
им. А. Мясникяна

Հայերեն թարգմանությունը խմբագրեցին՝ Ս. Ղևոնդյան, Տ. Ալեքսանյան և Ռ. Հովհաննիսյան
Տեխնիկական խմբագիր Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Դոլուխանյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Հրատ. № 380, պատվեր № 262, տիրաժ 2000, заказ № 262, тираж 2000
Հանձնված է արտադրության 24/VIII 1940 թ.
Ստորագրվել է տպագրության 12/IX 1940 թ.
Գինը 30 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան, Երևան, Ալլահվերդյան № 65.
Типография Гос. изд. полит. литературы, Ереван, Аллавердян № 65.

ՊՖ 464

Ազգային գրադարան
NL0174837

ՀՊԳԱ 30 Կ.

33287

И. СТАЛИН

К ВОПРОСУ АГРАРНОЙ ПОЛИТИКИ В СССР

Государственное издательство политической литературы
Ереван © 1946